



## ՄԱՆՈՒԿ ՄՈՎԱՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

## ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի մագիստրանտ

# ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոդվածում ներկայացվում է ընթացիկ ակտիվների վերլուծությունը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների օրինակով: Վերլուծության ընթացքում ուշադրություն է դարձվել կազմակերպությունների ընթացիկ ակտիվների շրջանառելիության և շահութաբերության ցուցանիշներին: Առանձին պարզաբանվել է ընթացիկ ակտիվների յուրաքանչյուր հոդվածի փոփոխությունը դիտարկվող ժամանակահատվածում, դրանց բարելավման նպատակով առաջարկվել են ուղիներ: Քանի որ ընթացիկ ակտիվները կազմակերպությունների իրացվելիության ապահովման հիմնաքարերից են, ուստի հատկապես կարևորվում է յուրաքանչյուր կազմակերպությունում դրանց ուսումնասիրման և օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով անհատական մոտեցման կիրառումը: Ժամանակակից տնտեսական կյանքում յուրաքանչյուր կազմակերպություն պետք է բացահայտի իր ողջ ներուժը, որպեսզի կարողանա առավելագույնս օգուտ ստանալ ներդրած ռեսուրսներից:

**Հիմնաբառեր.** ընթացիկ ակտիվներ, ընթացիկ ակտիվների վերլուծություն, զուտ շահույթ, շրջանառելիության ցուցանիշ

**Ներածություն:** Հոդվածի նպատակը կազմակերպության ընթացիկ ակտիվների վերլուծության մեթոդաբանության ամփոփումն է, համակարգային մոտեցումների տեսանկյունից լրացումն ու փորձարկումը, ինչպես նաև ընթացիկ ակտիվների օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացման ուղղությունների որոշումը: Մակրոմակարդակում ընթացիկ ակտիվները տնտեսական աճի տարրերն են, դրանց որոշակի քանակությունը և որակը կարող են ազդել աշխարհագրական տվյալ տարածքում առաջարկի և պահանջարկի փոփոխությունների վրա: Ձեռնարկատիրության տեսանկյունից ընթացիկ ակտիվները կազմակերպության զարգացման և արժեքի ստեղծման կարևոր նախապայման են: Նոր համավարակով (COVID-19) պայմանավորված՝ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու կազմակերպության ներուժի մշտադիտարկում: Կազմակերպության ընթացիկ ակտիվները համարվում են արտադրական պարբերաշրջանի ապահովման հիմնական տարրը, ուստի, տվյալ իրավիճակի հետ կապված, կազմակերպությունները պետք է ճշգրիտ գնահատեն ներդրումների և արտադրական գործընթացի շարունակականության ապահովումը: Կազմվել և առաջարկվել է կազմակերպության ընթացիկ ակտիվների համալիր վերլուծության կառուցվածքային և տրամաբանական սխեման՝ հաշվի առնելով ճյուղային առանձնահատկությունները: Վերլուծությունը ներկայացվել է կազմակերպության օրինակով: Առաջարկներ են արվել ընթացիկ ակտիվների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

**Գրականության ակնարկ:** Տնտեսագիտական գրականության մեջ նշվում է, որ շուկայական տնտեսության պայմաններում սուբյեկտի վճարունակության կարևոր ցուցանիշ է ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը<sup>1</sup>: Կայուն վճարունակությունը արտացոլվում է ինչպես կազմակերպության ֆինանսական վիճակի, այնպես էլ դրա սեփականատերերի ֆինանսական արդյունքների վրա, իսկ վճարունակությունը գնահատվում է որպես «ֆինանսական կայունության առանցք»:

Ա.Ֆ. Իոնովայի կարծիքով՝ ընթացիկ ակտիվներն այն միջոցներն են, որոնք ներդրվել են կազմակերպության արտադրական գործընթացի շարունակականությունը և գործունեությունը ապահովելու համար: Ընթացիկ ակտիվների կառավարումը ենթադրում է դրանց կառուցվածքի որոշում և բավարար մակարդակի ապահովում կազմակերպության շրջանառելիության և շահութաբերության միջև հավասարակշռություն ստեղծելու, ինչպես նաև ընթացիկ ակտիվների կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման աղբյուրների միջև արդյունավետ մակարդակ ապահովելու նպատակով<sup>2</sup>: Ըստ Ն.Պ. Լյուբոշինի՝ ընթացիկ ակտիվների գործառույթները արտադրության գործընթացում արմատապես տարբերվում են հիմնական միջոցների գործառույթներից: Ընթացիկ ակտիվներն ապահովում են արտադրության գործընթացի շարունակականությունը: Դրանց բնորոշ առանձնահատկությունը շրջանառելիության արագությունն է: Ընթացիկ ակտիվներն իրենց

<sup>1</sup> Տե՛ս Гончаров А.И., Барулин С.В., Терентьева М.В., Финансовое оздоровление предприятий// Теория и практика, М., “Ось-89”, 2004, էջ 11:

<sup>2</sup> Տե՛ս Ионова А.Ф., Селезнева Н.Н., Финансовый анализ. Учебное пособие, М., изд. “Проспект”, 2006, էջ 398:

տարրեր են, որոնք ամբողջությամբ սպառվում են յուրաքանչյուր արտադրական պարբերաշրջանում, կարող են կորցնել իրենց բնահրային ձևը և ամբողջությամբ ընդգրկվել պատրաստի արտադրանքի արժեքում<sup>3</sup>: Վ. Մ. Սեմյոնովայի կարծիքով՝ կազմակերպության այն ակտիվները, որոնք տնտեսական գործունեության արդյունքում իրենց արժեքն ամբողջությամբ փոխանցում են պատրաստի արտադրանքին, միաժամանակ մասնակցում են արտադրական գործընթացին՝ փոխելով բնական-նյութական ձևը, կոչվում են ընթացիկ ակտիվներ<sup>4</sup>: Ըստ Ս. Մ. Բուգրովայի՝ յուրաքանչյուր կազմակերպությունում, դրա առանձնահատկություններին համապատասխան, պետք է մշակվի ընթացիկ ակտիվների կառավարման քաղաքականություն: «Ընթացիկ ակտիվներ» եզրույթը (տեղական հաշվառման մեջ՝ «շրջանառու միջոցներ») վերաբերում է կազմակերպության այն ակտիվներին, որոնք դրամական միջոցներ են կամ կարող են շրջանառվել մեկ տարվա կամ մեկ արտադրական պարբերաշրջանի ընթացքում: Առանձնացնում են ընթացիկ ակտիվների ֆինանսական կառավարման համակարգում նշանակություն ունեցող հետևյալ խոշորացված բաղադրիչները՝ արտադրական պաշարներ, դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ<sup>5</sup>:

Լարրի Մ. Վոլտերի և Քրիստոֆեր Ջ. Սկոուսենի կարծիքով՝ ընթացիկ են համարվում այն ակտիվները, որոնք փոխարկվում են դրամական միջոցների կամ սպառվում են համեմատաբար կարճ ժամանակահատվածում՝ մասնավորապես այն ակտիվները, որոնք կփոխարինվեն դրամական միջոցներով կամ կսպառվեն մեկ տարվա կամ գործառնական պարբերաշրջանի ընթացքում՝ կախված այն բանից, թե որն է ավելի երկար: Ընթացիկ բաժնում ակտիվների փոխանցման դեպքում նախ պետք է նշված լինեն առավել իրացվելի ակտիվները (այսինքն՝ դրամական միջոցներ, կարճաժամկետ ներդրումներ և դեբիտորական պարտքեր), դրանց հաջորդում են բաժնետոմսերը և կանխավճարային ծախսերը<sup>6</sup>:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Գիտական գրականությունում և մասնագիտական հրապարակումներում կազմակերպության ընթացիկ ակտիվների վերլուծության մեթոդաբանությունը լայնորեն լուսաբանվել է, միաժամանակ, ճյուղային առումով, այս թեման մնում է արդիական և շարունակում է առաջացնել գիտական ու գործնական հետաքրքրություն:

Ուսումնասիրության մեթոդներն ընտրվում են՝ ելնելով օբյեկտի առանձնահատկություններից և առաջադրված խնդիրներից: Տվյալ ժամանակահատվածում ընթացիկ ակտիվների վիճակը և շարժը գնահատելու համար իրականացվում է հորիզոնական և ուղղահայաց վերլուծություն: Ընթացիկ ակտիվների օգտագործման արդյունավետության գնահատման համար կիրառվում են գործակցային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները: Վերլուծության արդյունավետությունը մեծացնելու նպատակով ան-

<sup>3</sup> Տե՛ս **Любушин Н.П.**, Экономический анализ. Учебник. М., изд. «Юнити-Дана», 2007, էջ 265:

<sup>4</sup> Տե՛ս **Семёнов В.М.**, Экономика предприятия. Учебник для вузов. 5-е изд., СПб.: «Питер», 2008, էջ 113:

<sup>5</sup> Տե՛ս **Бугрова С.М.**, Финансовый менеджмент. Учебное пособие // С.М. Бугрова, Н.М. Гук, «Кемеровский технологический институт пищевой промышленности». Кемерово, 2008, էջ 100:

<sup>6</sup> Տե՛ս **Larry M. Walther, Christopher J. Skousen**, The accounting cycle// «Christopher J. Skousen & Ventus Publishing ApS», 2009, էջ 94:

հրաժեշտ է ուշադրություն դարձնել առևտրային ոլորտի՝ և՛ որպես համակարգի, և՛ որպես գործընթացի ճյուղային առանձնահատկություններին, որոնք կանխորոշում են ընթացիկ ակտիվների վերլուծության յուրահատկությունները: Այնպես որ, առևտրում չկան արտադրանքի թողարկման հետ կապված ծախսեր, բայց կան այդ արտադրանքի պահպանմանն ու իրացմանը վերաբերող ծախսեր: Ի տարբերություն արտադրական կազմակերպությունների, առևտրի մեջ ընթացիկ ակտիվների հիմնական տարրը ոչ թե արտադրական, այլ ապրանքային պաշարներն են: Առևտրում համեմատաբար բարձր են իրացման ծախսերը:

Ընթացիկ ակտիվների վերլուծությունը նպատակահարմար է սկսել՝ գնահատելով դրանց կազմը, կառուցվածքը և դինամիկան: Դա անհրաժեշտ է՝ որոշելու, թե որքան է այդ ակտիվների ազդեցությունը կազմակերպության գույքի ընդհանուր արժեքի վրա և եզրակացության հանգելու տվյալ պահին դրանց վիճակի մասին: Հետագայում այդ տվյալները կարող են հիմք ծառայել ընթացիկ ակտիվների օգտագործման արդյունավետության աճի ուղղությունները բացահայտելու համար:

Ընթացիկ ակտիվների կազմը և կառուցվածքը կարևոր է գնահատել նաև իրացվելիության տեսանկյունից, այսինքն՝ ճշտել դրանց՝ դրամական միջոցների փոխակերպման ունակությունը: Խոսելով կազմակերպության իրացվելիության մասին՝ նկատի ունենք ընթացիկ ակտիվների այն չափը, որը տեսականորեն բավարար է կարճաժամկետ պարտավորությունները մարելու համար: Վերլուծության ընթացքում էական նշանակություն ունեն տարբեր ցուցանիշների միջև պատճառահետևանքային կապերի հայտնաբերումն ու չափումը: Ընթացիկ ակտիվների օգտագործման արդյունավետության մակարդակի փոփոխության վրա առանձին գործոնների ազդեցությունը գնահատելու համար կիրառվում են ստատիկ և դինամիկ վերլուծության մեթոդներ:

Ժամանակակից տնտեսավարող սուբյեկտները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն ընթացիկ ակտիվների արդյունավետ և ռացիոնալ կառավարմանը, քանի որ դրանից է կախված կազմակերպության ընդհանուր տնտեսական արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, կարող ենք ենթադրել, որ ընթացիկ ակտիվների շահագործման արդյունավետությունը պայմանավորված է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության բոլոր՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով:

**Վերլուծություն:** Ընթացիկ ակտիվների կառուցվածքի վրա ազդում են գործունեության որոշակի տեսակի առանձնահատկությունները, գնորդների և պատվիրատուների հետ փոխհարաբերությունների ընդունված կարգը և այլ գործոններ: Ուղղահայաց (կառուցվածքային) վերլուծության ընթացքում որոշվում է հաշվետվությունների յուրաքանչյուր հոդվածի վրա վերջնական ցուցանիշների ազդեցությունը: Այս վերլուծության ընթացքում հաշվարկվել են ֆինանսական ցուցանիշների առանձին կառուցվածքային բաղադրիչների կշիռները<sup>7</sup>:

<sup>7</sup> Տե՛ս Костирко Р.О., Финансовый анализ. Учебное пособие. Харьков, изд. “Фактор”, 2007, էջ 45:

Սույն հետազոտության մեջ ներկայացվում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների տվյալները: Առաջին կազմակերպությունը զբաղվում է էլեկտրաէներգիայի բաշխմամբ և իրացմամբ, իսկ երկրորդը՝ գազամատակարարմամբ: Հետազոտվող կազմակերպությունների ընթացիկ ակտիվների կառուցվածքի և շարժի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

«ՀԷՑ» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների ընթացիկ ակտիվների կառուցվածքը և շարժը 2017-2019 թթ. (մլն դրամ)<sup>8</sup>


Ցուցանիշներ	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Շեղում 2017-2018 թթ.		Շեղում 2018-2019 թթ.	
	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա
Պաշարներ	7349	16618	9867	16021	9989	15538	2518	-597	122	-483
Տրամադրված փոխառություններ	0	300	0	166	0	22	0	-134	0	-144
Ընթացիկ հարկային ակտիվներ	1512	0	111	0	0	0	-1401	0	0	0
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	25621	39919	23149	39531	25564	43897	-2472	-388	2415	4366
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար	0	250	0	41	0	21	0	-209	0	-20
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	8030	0	2840	0	518	0	-5190	0	-2322	0
Բանկային ավանդ	21	32901	0	737	0	847	-21	-32164	0	110
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1852	9663	3599	5530	4319	8771	1747	-4133	720	3241
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>	<b>44385</b>	<b>99651</b>	<b>39566</b>	<b>62026</b>	<b>40390</b>	<b>69096</b>	<b>-4819</b>	<b>-37625</b>	<b>824</b>	<b>7070</b>

«ՀԷՑ» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների գործունեության առանձնահատկությունների հետևանքով ընթացիկ ակտիվների կառուցվածքում կայուն կերպով գերակշռում են առևտրային և այլ դեբիտորական պարտքեր:

«ՀԷՑ» ՓԲԸ դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը 2017 թ. կազմել է 57,7%, 2018 թ.՝ 58,5%, 2019-ին՝ 63,3%: Միջին հաշվով, երեք տարվա ընթացքում այդ ցուցանիշը 59,8% է: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ դեբի-


<sup>8</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները: Տվյալների աղբյուրը՝ [http://ena.am/downloads/FS\\_ENA\\_2019am.pdf](http://ena.am/downloads/FS_ENA_2019am.pdf), <http://ena.am/downloads/financial-statement-2018-am.pdf>, [https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom\\_-2019-fs\\_armenian.pdf](https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom_-2019-fs_armenian.pdf) և <https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/sum-2018-arm.pdf>

տորական պարտքերի տեսակարար կշիռը 2017 թ. կազմել է 40,1%, 2018 թ.՝ 63,7%, 2019-ին՝ 63,5%: Միջին հաշվով, երեք տարվա ընթացքում այդ ցուցանիշը 55,8% է: Կազմակերպությունները պետք է քայլեր ձեռնարկեն դեբիտորական պարտքերի հավաքագրման և ազատ դրամական միջոցները կազմակերպության գործունեության մեջ ներդնելու նպատակով, ինչը կարող է որոշակիորեն զերծ պահել վարկային բեռի ավելացումից:



Գծապատկեր 1. «ՀԷՑ» ՓԲԸ ընթացիկ ակտիվների և դրանց փարթերի շարժը 2017-2019 թթ. (հազ. դրամ)<sup>9</sup>

Գծապատկեր 1-ից երևում է, որ «ՀԷՑ» ՓԲԸ-ում 2019 թ., 2017 թ. համեմատությամբ, նկատվում է ընթացիկ ակտիվների արժեքի նվազում, որը պայմանավորված է եղել ընթացիկ ակտիվների գծով կանխավճարների գումարի նվազմամբ: Ընթացիկ ակտիվների կազմում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն համապատասխանաբար՝ դեբիտորական պարտքերը, պաշարները և դրամական միջոցները:



Գծապատկեր 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ընթացիկ ակտիվների և դրանց փարթերի շարժը 2017-2019 թթ. (հազ. դրամ)<sup>10</sup>

<sup>9</sup> Գծապատկերը կազմել են հեղինակները: Տվյալների աղբյուրը՝ [http://ena.am/downloads/FS\\_ENA\\_2019am.pdf](http://ena.am/downloads/FS_ENA_2019am.pdf), <http://ena.am/downloads/financial-statement-2018-am.pdf>, [https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom\\_-2019-fs\\_armenian.pdf](https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom_-2019-fs_armenian.pdf) և <https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/sum-2018-arm.pdf>

<sup>10</sup> Գծապատկերը կազմել են հեղինակները: Տվյալների աղբյուրը՝ [http://ena.am/downloads/FS\\_ENA\\_2019am.pdf](http://ena.am/downloads/FS_ENA_2019am.pdf), <http://ena.am/downloads/financial-statement-2018-am.pdf>, [https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom\\_-2019-fs\\_armenian.pdf](https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom_-2019-fs_armenian.pdf) և <https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/sum-2018-arm.pdf>

Ըստ գծապատկեր 2-ի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում 2019 թ., 2017 թ. համեմատությամբ, նկատվում է ընթացիկ ակտիվների գումարի նվազում, որը պայմանավորված է եղել բանկային ավանդի գումարի նվազմամբ: Ընթացիկ ակտիվների կազմում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն համապատասխանաբար՝ դեբիտորական պարտքերը, պաշարները և դրամական միջոցները:

Շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս, թե տվյալ ժամանակահատվածում ընթացիկ ակտիվները քանի անգամ են վերածվում դրամական միջոցների, այսինքն՝ քանի պտույտ են կատարում կազմակերպությունում ներդրված միջոցները.

$$F_{\text{ուց}} = \text{Իրացումից զուտ հասույթ} / \text{Ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք}^{11}$$

Աղյուսակ 2

«ՀԷՏ» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների ընթացիկ ակտիվների շրջանառելիության որոշումը 2017-2019 թթ. (մլն դրամ)<sup>12</sup>

Ցուցանիշներ	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Շեղում 2017-2018 թթ.		Շեղում 2018-2019 թթ.	
	ՀԷՏ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՏ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՏ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՏ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՏ	Գազպրոմ Արմենիա
1. Արտադրանքի իրացումից հասույթ	191026	216846	181412	232809	194062	240356	-9614	15963	12650	7547
2. Ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք	43360	106496	41975	80839	39978	65561	-1385	-25657	-1997	-15278
պաշարներ	4674	15655	8608	16320	9928	15780	3934	665	1320	-540
դեբիտորական պարտքեր	27440	48331	24385	39725	24357	41714	-3055	-8606	-28	1989
դրամական միջոցներ և համարժեքներ	1597	15313	2725	7597	3959	7151	1128	-7716	1234	-446
3. Ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը (պտույտ)	4.406	2.036	4.322	2.880	4.854	3.666	-0.084	0.844	0.532	0.786
պաշարներ	40.870	13.852	21.075	14.265	19.547	15.232	-19.795	0.414	-1.528	0.966
դեբիտորական պարտքեր	6.962	4.487	7.439	5.861	7.967	5.762	0.478	1.374	0.528	-0.099
դրամական միջոցներ և համարժեքներ	119.616	14.161	66.573	30.645	49.018	33.612	-53.042	16.484	-17.555	2.967

<sup>11</sup> **Бабенко И. В.**, Управление оборотными активами: логистический подход. Монография // Бабенко И.В., Тиньков С.А., М.: изд. “ИНФРА-М”, 2011, с. 23.

<sup>12</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները: Տվյալների աղբյուրը՝ [http://ena.am/downloads/FS\\_ENA\\_2019am.pdf](http://ena.am/downloads/FS_ENA_2019am.pdf), <http://ena.am/downloads/financial-statement-2018-am.pdf>, [https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom\\_-2019-fs\\_armenian.pdf](https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom_-2019-fs_armenian.pdf) և <https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/sum-2018-arm.pdf>

Աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ «ՀԷՑ» ՓԲԸ-ում 2019 թ., 2017 թ. համեմատությամբ, նկատվում է ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագության աճ: Եթե մեկնաբանենք շրջանառելիությունը որպես ընթացիկ ակտիվների վերադարձի ցուցանիշ, ապա 2019 թ. ընթացիկ ակտիվներում ներդրված յուրաքանչյուր միավորի դիմաց կազմակերպությունը ստացել է 4,854 դրամ, այսինքն՝ կատարվել է չորս լրիվ պտույտ:

2019 թ. ընթացիկ ակտիվներում ներդրված յուրաքանչյուր միավորն ապահովել է 0,532 դրամի կամ 12,31%-ով ավելի եկամուտ, քան 2018 թ., իսկ 2018 թ.՝ 0,084 դրամի կամ 1,91%-ով պակաս եկամուտ, քան 2017 թ.: 2019 թ. պաշարների շրջանառելիությունը 2018 թ. համեմատությամբ նվազել է 1,528 պտույտով կամ 7,25%-ով, իսկ 2018 թ., 2017 թ. համեմատությամբ՝ 19,795 պտույտով կամ 48,43%-ով:

2019 թ. դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը 2018 թ. համեմատությամբ աճել է 0,528 պտույտով կամ 7,1%-ով, իսկ 2018 թ., 2017 թ. համեմատությամբ՝ 0,478 պտույտով կամ 6,87%-ով: 2019 թ. դրամական միջոցների և դրանց համարժեքների շրջանառելիությունը 2018 թ. համեմատությամբ նվազել է 17,555 պտույտով կամ 26,37%-ով, իսկ 2018 թ., 2017 թ. համեմատությամբ՝ 53,042 պտույտով կամ 44,55%-ով: Այս ցուցանիշի նվազումը պայմանավորված է դրամական միջոցների «սառեցմամբ», այսինքն՝ այն հանգամանքով, որ դրանք չեն ներդրվել կազմակերպության որևէ այլ գործունեության բնագավառում:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում 2019 թ., 2017 թ. համեմատությամբ, նույնպես նկատվում է ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագության աճ: 2019 թ. ընթացիկ ակտիվներում ներդրված յուրաքանչյուր միավորի դիմաց կազմակերպությունը ստացել է 3,666 դրամ, այսինքն՝ կատարվել է երեք լրիվ պտույտ:

2019 թ. ընթացիկ ակտիվներում ներդրված յուրաքանչյուր միավորն ապահովել է 0,786 դրամի կամ 27,29%-ով ավելի եկամուտ, քան 2018 թ., իսկ 2018 թ.՝ 0,844 դրամի կամ 41,45%-ով պակաս եկամուտ, քան 2017 թ.: 2019 թ. պաշարների շրջանառելիությունը 2018 թ. համեմատությամբ աճել է 0,966 պտույտով կամ 6,77%-ով, իսկ 2018 թ., 2017 թ. համեմատությամբ՝ 0,414 պտույտով կամ 2,99%-ով: 2019 թ. դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը 2018 թ. համեմատությամբ նվազել է 0,099 պտույտով կամ 1,69%-ով, իսկ 2018 թ., 2017 թ. համեմատությամբ, աճել է 1,374 պտույտով կամ 30,6%-ով: 2019 թ. դրամական միջոցների և դրանց համարժեքների շրջանառելիությունը 2018 թ. համեմատությամբ աճել է 2,967 պտույտով կամ 9,68%-ով, իսկ 2018 թ., 2017 թ. համեմատությամբ՝ 16,484 պտույտով կամ 116,4%-ով: Այս ցուցանիշի աճը պայմանավորված է եղել դրամական միջոցների նվազմամբ, ինչը վկայում է կազմակերպության կողմից ազատ դրամական միջոցների ճշգրիտ վերաբաշխման մասին: «ՀԷՑ» ՓԲԸ-ում նկատվում է պաշարների շրջանառելիության նվազում, որը պայմանավորված է պաշարների ծավալի աճով, և բարձր մակարդակը պահպանվել է 2018-2019 թթ.՝ պայմանավորված կազմակերպության վերազինմամբ և նոր պաշարների ձեռքբերմամբ: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում նկատվում է պաշարների շրջանառելիության աճ, ինչը վկայում է, որ կազմակերպությունը կարողանում է արդյունավետորեն օգտագործել իր տրամադրության տակ



եղած պաշարները, բայց ցանկալի կլիներ արագացնել շրջանառելիությունը, որը վերաբերում է նաև 2018-2019 թթ., քանի որ դա կարող է մեծացնել շահույթի մակարդակը: Ընդհանուր առմամբ, հետազոտվող ժամանակահատվածում երկու կազմակերպություններում նկատվել է դեբիտորական պարտքերի շրջանառելիության աճ, որը թույլ է տալիս եզրակացնել, որ կազմակերպությունները սկսել են քայլեր ձեռնարկել դեբիտորական պարտքերի հավաքագրման ուղղությամբ: Դեբիտորական պարտքերը, մեծ տեսակարար կշիռ ունենալով ընթացիկ ակտիվների կազմում, որը երկու կազմակերպություններում էլ բարձր է 50%-ից, կարող են խնդիրների առաջ կանգնեցնել և՛ համավարակի, և՛ 44-օրյա պատերազմի պատճառով<sup>13</sup>: «ՀԷՑ» ՓԲԸ-ում նկատվում է դրամական միջոցների շրջանառելիության նվազում, ինչը պայմանավորված է եղել դրամական միջոցների աճով: Դա վկայում է վերջիններիս «սառեցման» և ոչ նպատակային օգտագործման մասին: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում նկատվում է դրամական միջոցների շրջանառելիության աճ. 2018 թ., 2017 թ. համեմատությամբ, այդ աճը հասել է 116,4%-ի, ինչը վկայում է, որ կազմակերպությունը քայլեր է ձեռնարկել ազատ դրամական միջոցների ճշգրիտ վերաբաշխման ուղղությամբ:

Աղյուսակ 3

**«ՀԷՑ» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների ընթացիկ ակտիվների շրջանառելիության ազդեցությունը 2017-2019 թթ. շահույթի վրա (մլն դրամ)<sup>14</sup>**

Ցուցանիշներ	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Շեղում 2017-2018 թթ.		Շեղում 2018-2019 թթ.	
	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա
1. Ձուտ շահույթ	6654	-9364	10753	14920	11764	524	4099	24284	1011	-14396
2. Արտադրանքի իրացումից հասույթ	191026	216846	181412	232809	194062	240356	-9614	15963	12650	7547
3. Ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք	43360	106496	41975	80839	39978	65561	-1385	-25657	-1997	-15278
4. Շրջանառելիություն	4.406	2.036	4.322	2.880	4.854	3.666	-0.084	0.844	0.532	0.786
5. Իրացման շահութաբերություն	0.035	-0.043	0.059	0.064	0.061	0.002	0.024	0.107	0.001	-0.062
	<b>ՀԷՑ ՓԲԸ</b>					<b>Գազպրոմ Արմենիա ՓԲԸ</b>				
	<i>2017-2018 թթ.</i>		<i>2018-2019 թթ.</i>		<i>2017-2018 թթ.</i>		<i>2018-2019 թթ.</i>			
6. Ազդեցությունը շահույթի վրա	-0.084 x 0.035 x 41975 = -123.4		0.532 x 0.059 x 39977 = +1254.8		0.844 x (-0.043) x 80839 = -2938.8		0.786 x 0.064 x 65561 = 3298			

<sup>13</sup> Այս մասին հստակ վերլուծություն չենք կարող ներկայացնել 2020 թ. ֆինանսական հաշվետվությունների չիրատարական պատճառով:

<sup>14</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները: Տվյալների աղբյուրը՝ [http://ena.am/downloads/FS\\_ENA\\_2019am.pdf](http://ena.am/downloads/FS_ENA_2019am.pdf), <http://ena.am/downloads/financial-statement-2018-am.pdf>, [https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom\\_-2019-fs\\_armenian.pdf](https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom_-2019-fs_armenian.pdf) և <https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/sum-2018-arm.pdf>:

Ընթացիկ ակտիվների շրջանառելիության փոփոխությունն իր ազդեցությունն է թողնում շահույթի վրա: Դա որոշվում է ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակցի շեղման, իրացման շահութաբերության նախատեսված մակարդակի ցուցանիշների և ընթացիկ ակտիվների միջին տարեկան փաստացի արժեքի արտադրյալով:

Ըստ աղյուսակ 3-ի՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ում 2017-2018 թթ. ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը նվազել է 0.084 պտույտով, որը հանգեցրել է նույն ժամանակաշրջանում շահույթի նվազմանը 123.4 մլն դրամով: 2018-2019 թթ. ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը արագացել է 0.532 պտույտով, որը հանգեցրել է նույն ժամանակաշրջանում շահույթի աճին 1254.8 միլիոն դրամով: Մեր կարծիքով՝ ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագացումը կարող է նպաստել զուտ շահույթի աճին, իսկ դրա համար անհրաժեշտ է օպտիմալացնել ընթացիկ ակտիվների կազմը և նոր ստացված վարկերը նպատակաուղղել ենթակառուցվածքների վերազինմանն ու նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում 2017-2018 թթ. բացասական ֆինանսական արդյունքի հետևանքով նույն ժամանակաշրջանում շահույթը նվազել է 2938.8 մլն դրամով: 2018-2019 թթ. ընթացիկ ակտիվների շրջանառելիությունն արագացել է 0.786 պտույտով, որը հանգեցրել է նույն ժամանակաշրջանում շահույթի աճին 3298 մլն դրամով:

**Աղյուսակ 4**

**«ՀԷՑ» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների 2017-2019 թթ. ընթացիկ ակտիվների և պարտավորությունների շրջանառելիության համեմատություն (մլն դրամ)<sup>15</sup>**

Ցուցանիշներ	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Շեղում 2017-2018 թթ.		Շեղում 2018-2019 թթ.	
	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա	ՀԷՑ	Գազպրոմ Արմենիա
1. Արտադրանքի իրացումից հասույթ	191026	216846	181412	232809	194062	240356	-9614	+15963	+12650	+7547
2. Ընթացիկ պարտավորությունների միջին տարեկան արժեք	52549	186772	41278	143222	51976	78967	-11271	-43550	+10698	-64255
3. Ընթացիկ ակտիվների շրջանառելիությունն ըստ պտույտների	4.406	2.036	4.322	2.880	4.854	3.666	-0.084	+0.844	+0.532	+0.786
4. Ընթացիկ պարտավորությունների շրջանառելիությունն ըստ պտույտների	3.635	1.161	4.395	1.626	3.734	3.044	+0.760	+0.464	-0.661	+1.418

Պետք է հաշվի առնել նաև ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության արագությունը: Եթե ընթացիկ ակտիվ-

<sup>15</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները: Տվյալների աղբյուրը՝ [http://ena.am/downloads/FS\\_ENA\\_2019am.pdf](http://ena.am/downloads/FS_ENA_2019am.pdf), <http://ena.am/downloads/financial-statement-2018-am.pdf>, [https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom\\_-2019-fs\\_armenian.pdf](https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom_-2019-fs_armenian.pdf) և <https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/sum-2018-arm.pdf>

ների շրջանառելիության արագությունը գերազանցում է ընթացիկ պարտավորությունների շրջանառելիությունը, ապա կազմակերպության վճարունակությունը գնահատվում է բավարար, և հակառակը (աղյուսակ 4):

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, երկու կազմակերպություններում էլ ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագությունը գերազանցում է ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության արագությունը, ինչը վկայում է կազմակերպությունների վճարունակության բարձր մակարդակի մասին:

Վերլուծենք շահութաբերությունն ըստ կազմակերպության ընթացիկ ակտիվների: Ընթացիկ ակտիվների շահութաբերությունը ցույց է տալիս հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կողմից դրանց օգտագործման արդյունավետությունը: Ընթացիկ ակտիվների շահութաբերությունը գնահատվում է բոլոր ակտիվների շահութաբերության և ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության համադրման հիման վրա<sup>16</sup>: Բանաձևը կունենա հետևյալ տեսքը.

**ՇԳ<sub>ԸԱ</sub> = Զուտ շահույթ հարկումից հետո/Ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք**

Ընթացիկ ակտիվների շահութաբերությունը բնութագրում է դրանց օգտագործման արդյունավետությունը և ցույց է տալիս, թե որքան միավոր շահույթ է վաստակում կազմակերպությունը վաճառքի արդյունքում՝ ներդրված յուրաքանչյուր միավոր ընթացիկ ակտիվի դիմաց<sup>17</sup> (աղյուսակ 5):

**Աղյուսակ 5**

**«ՀԵՏ» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների ընթացիկ ակտիվների շահութաբերության դինամիկ վերլուծության ցուցանիշները 2017-2019 թթ. (մլն դրամ)<sup>18</sup>**

Ցուցանիշներ	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Շեղում 2017-2018 թթ.		Շեղում 2018-2019 թթ.	
	ՀԵՏ	Գազպրոմ Արմենիա	ՀԵՏ	Գազպրոմ Արմենիա	ՀԵՏ	Գազպրոմ Արմենիա	ՀԵՏ	Գազպրոմ Արմենիա	ՀԵՏ	Գազպրոմ Արմենիա
Զուտ շահույթ հարկումից հետո	6654	-9364	10753	14920	11764	524	+4099	+24284	+1011	-14396
Ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք	43360	106496	41975	80839	39978	65561	-1385	-25657	-1997	-15278
Ընթացիկ ակտիվների շահութաբերություն (%)	15.346	-8.793	25.618	18.456	29.426	0.799	+10.272	+27.249	+3.809	-17.657

<sup>16</sup> Տե՛ս **Шеремет А.**, Методика финансового анализа деятельности коммерческих организаций. М., изд. “Инфра-М”, 2008, էջ 90:

<sup>17</sup> Տե՛ս **Крылов С.И.**, Финансовый анализ. Учебное пособие. Екатеринбург, “Издательство Уральского университета”, 2016, էջ 53:

<sup>18</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները: Տվյալների աղբյուրը՝ [http://ena.am/downloads/FS\\_ENA\\_2019am.pdf](http://ena.am/downloads/FS_ENA_2019am.pdf), <http://ena.am/downloads/financial-statement-2018-am.pdf>, [https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom\\_-2019-fs\\_armenian.pdf](https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/gazprom_-2019-fs_armenian.pdf) և <https://armenia-am.gazprom.com/d/textpage/58/88/sum-2018-arm.pdf>

«ՀԷՑ» ՓԲԸ-ում 2019 թ., 2018 թ. համեմատությամբ, նկատվում է ընթացիկ ակտիվների շահութաբերության աճ 3.809%-ով, իսկ 2018 թ., 2017 թ. համեմատությամբ՝ 13.388%-ով աճ: Այս ցուցանիշները պայմանավորված էին ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքի նվազմամբ և զուտ շահույթի աճով: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում 2019 թ., 2018 թ. համեմատությամբ, նկատվում է ընթացիկ ակտիվների շահութաբերության նվազում 17.657%-ով, որը պայմանավորված էր զուտ շահույթի գումարի նվազմամբ, իսկ 2018 թ., 2017 թ. համեմատությամբ, աճել է 27.249%-ով, որը պայմանավորված էր զուտ շահույթի գումարի աճով և ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքի նվազմամբ:

**Վերականգնություններ:** Վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ «ՀԷՑ» ՓԲԸ-ում դրամական միջոցների շրջանառելիությունը դանդաղել էր շուրջ 2,5 անգամ, որը պայմանավորված էր դրամական միջոցների մեծ մնացորդով, ինչը վկայում է ազատ և «սառեցված» վիճակում գտնվող դրամական միջոցների մասին: Դրամական միջոցների մասով այդպիսի խնդիր առկա չէ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում, քանի որ այստեղ 2018-2019 թթ. ազատ դրամական միջոցների հաշվին ձեռք են բերվել հիմնական միջոցներ, և ներդրումներ իրականացվել գործունեության այլ ոլորտներում: Այս մասին տեղեկությունն առկա է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

«ՀԷՑ» ՓԲԸ-ում առկա են դեբիտորական պարտքերի շրջանառելիության հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ 2017 թ. համեմատությամբ 2019 թ. նվազել է շուրջ 2 անգամ՝ 119.616 պտույտից դառնալով 49.018, ինչը վկայում է դեբիտորական պարտքերի չհավաքագրման մասին: Դիտարկվող ժամանակաշրջանում կազմակերպության շրջանառու կապիտալը համարվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎՋԵԲ), Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) համապատասխանաբար՝ 25 մլն և 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցների ներգրավմամբ<sup>19</sup>:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում նույնպես առկա է այս խնդիրը: Իհարկե, այստեղ դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը 2019 թ., 2017 թ. համեմատությամբ, աճել է շուրջ 2 անգամ՝ 14.161 պտույտից դառնալով 33.612, բայց այս աճը պայմանավորված է եղել զուտ շահույթի աճով: Ուստի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում նույնպես առկա է դեբիտորական պարտքերի բարձր մակարդակ, որը կարող է նույն հետևանքն առաջացնել: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2017 թ. ֆինանսական արդյունքը եղել է բացասական՝ 9364 միլիոն դրամ, իսկ 2019-ին՝ 524 միլիոն դրամ, ինչպես նաև այն, որ 2019 թ. երկարաժամկետ վարկերը 2017 թ. համեմատությամբ աճել են շուրջ 3,5 անգամ՝ 14064 մլն դրամից դառնալով 49598 մլն:

Երկու կազմակերպություններն էլ, ունենալով մենաշնորհային դիրք ՀՀ-ում, 2020 թ. տեղի ունեցած իրադարձությունների պատճառով՝ համավարակ և 44-օրյա պատերազմ, արտաքին ներդրումների կարիք ունեն: Այս կազմակերպությունները մեր երկրի համար կարևոր ռազմավարական նշանակություն ունեն, ուստի պետք է փնտրել բոլոր արդյունավետ ուղիները ծանր իրավիճակը հաղթահարելու համար:

Մեր կարծիքով՝ նշված կազմակերպությունները իրենց դեբիտորական պարտքերի հավաքագրման և ընթացիկ ակտիվների շրջանառելիության

<sup>19</sup> Տվյալների աղբյուրը՝ <https://hetq.am/hy/article/117799>

արագացման համար կարող են կիրառել հետևյալ մոտեցումները.

- Նախկին անհուսալի դեբիտորական պարտքերի հավաքագրման նպատակով իրականացնել պարտքի որոշակի չափի ներում՝ դրանով իսկ շահագրգռելով հաճախորդներին մարելու պարտքերը:
- Ապագա դեբիտորական պարտքերի հավաքագրելիության մակարդակը բարձրացնելու նպատակով կարելի է իրականացնել հաճախորդների դասակարգում՝ ուսումնասիրելով էլեկտրաէներգիայի և գազի նրանց սպառման ամսական կամ տարեկան մակարդակները: Այդ դասակարգումը կարող է լինել ըստ էլեկտրաէներգիայի և գազի սպառման տարբեր մակարդակների, և, դրա հիման վրա, որոշակի սահմանաչափը գերազանցելու դեպքում կարող է կիրառվել ճկուն գնային քաղաքականություն:
- ՀՀ ներկայիս ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում կարող է քննարկվել պետության կողմից բնակչության անապահով խավի էլեկտրաէներգիայի և գազի սպառման որոշակի չափի սուբսիդավորման հարցը, ինչի հետևանքով ուսումնասիրվող կազմակերպությունների դեբիտորական պարտքերի մակարդակը կնվազի:
- Ընթացիկ ակտիվների շահութաբերության ցուցանիշի մեծացմանը զուգահեռ, «ՀԷՑ» ՓԲԸ-ն կարող է օգտագործել էներգիայի այլընտրանքային աղբյուրներ: ՀՀ-ում արդեն հիմնվել են մի շարք արևային էլեկտրակայաններ. դա կարող է նվազեցնել էներգիայի սակագները և ապահովել սպառման ավելի մեծ ծավալներ, ինչն էլ կհանգեցնի շահույթի ցուցանիշի մեծացմանը:

### Օգտագործված գրականություն

1. Бабенко И.В., Управление оборотными активам: логистический подход. Монография // Бабенко И.В., Тиньков С.А., М., изд. “ИНФРА-М”, 2011.
2. Бугрова С.М., Финансовый менеджмент. Учебное пособие // “Кемеровский технологический институт пищевой промышленности”, Кемерово, 2008.
3. Гончаров А.И., Барулин С.В., Терентьева М.В., Финансовое оздоровление предприятий // Теория и практика. М., “Ось-89”, 2004.
4. Ионова А.Ф., Селезнева Н.Н., Финансовый анализ. Учебное пособие. М., изд. “Проспект”, 2006.
5. Костирко Р. О., Финансовый анализ. Учебное пособие. Харьков, изд. “Фактор”, 2007.
6. Крылов С.И., Финансовый анализ. Учебное пособие. Екатеринбург, “Издательство Уральского университета”, 2016.
7. Любушин Н.П., Экономический анализ. Учебник. М., изд-во “Юнити-Дана”, 2007.
8. Никитская Е.Ф., Финансовый анализ. Учебное пособие. ЯрГУ, 2007.
9. Семёнов В.М., Экономика предприятия. Учебник для вузов. 5-е изд. // Под ред. акад. В. М. Семенова. СПб.: “Питер”, 2008.
10. Шеремет А., Методика финансового анализа деятельности коммерческих организаций. М. изд. “Инфра-М”, 2008.
11. Larry M. Walther, Christopher J. Skousen, The Accounting Cycle // Christopher J. Skousen & Ventus Publishing ApS, 2009.

**МАНУК МОВСИСЯН***Доцент АГЭУ, кандидат економічних наук***ГЕВОРГ МАРТИРОСЯН***Магістрант кафедри фінансового учета АГЭУ*

***Роль анализа оборотных средств в деятельности организаций.***— В статье представлен анализ оборотных средств на примере ЗАО «Электрические сети Армении» и ЗАО «Газпром Армения». В ходе анализа внимание было уделено показателям оборачиваемости оборотных средств и прибыльности организаций. Изменение каждой статьи оборотных средств в рассматриваемый период уточнялось отдельно, и предлагались способы их улучшения. Поскольку оборотные активы являются одним из краеугольных камней обеспечения ликвидности организаций, очень важно применять индивидуальный подход с целью повышения уровня эффективности их изучения и использования в каждой организации. В современной экономической жизни каждая организация должна полностью раскрыть свой потенциал, чтобы получить максимальную отдачу от вкладываемых ресурсов.

**Ключевые слова:** оборотные активы, анализ оборотных средств, чистая прибыль, коэффициент оборачиваемости.

DOI: 10.52174/1829-0280\_2021\_1\_37

JEL: G12, L29

**МАНУК МОВСИСЯН***PhD in Economics, Associate Professor at ASUE***ГЕВОРГ МАРТИРОСЯН***MA Student of the Chair of Financial Accounting at ASUE*

***Role of Current Asset Analysis in the Activities of Organizations.***— The paper presents the analysis of current assets based on the examples of "Electric Networks of Armenia" CJSC and "Gazprom Armenia" CJSC. During the analysis, attention was paid to the current assets turnover and profitability indicators of the organizations. The change in each item of current assets during the period under review was explained separately, and some ways to improve them were suggested. Since current assets are one of the cornerstones of ensuring the liquidity of organizations, it is very important to apply an individual approach in each organization to study and use them to increase efficiency. In modern economic life, every organization must discover its full potential in order to get the most out of the resources it invests.

**Key words:** current assets, analysis of current assets, net profit, turnover ratio.

DOI: 10.52174/1829-0280\_2021\_1\_37

JEL: G12, L29